Նախագիծ

ԵՊՀ ԻՄ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման 2018-2020թթ. միջնաժամկետ ժամանակացույց-պլան

Իջևան-2018

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից:

Խնդիր 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:

Խնդիր 1.2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
1.2.1.Ակտիվացնել «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի» աշխատանքները՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտություններն արդիականացնելու ու զարգացնելու նպատակով:	01.2018-12.2020	ԵԴԱԿ ՄԿՈԱԲ		Վերապատրաստված 100 դասախոսներ
1.2.2.Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:	01.2018-12.2020	Տնօրեն ՈՒՄՎ ՄԿՈԱԲ Ֆակուլտետներ Ամբիոններ		Հաջողված փորձի տարածման օրինակներ: Մրցանակներ՝ խրախուսման նպատակով: Պարբերական սեմինարներ՝ դասավանդման փորձի փոխանակման նպատակով:
1.2.3.Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:	09.2019-12.2020	ՈՒՄՎ ՄԿՈԱԲ Ֆակուլտետներ Ամբիոններ	-	Համապատասխան մեթոդական ձեռնարկներ: Երկու ֆակուլտետներում փորձարկման արդյունքներ: Ֆորմատիվ գնահատման մեթոդների ընդլայնված կիրառում կրթական ծրագրերում

1.2.4.Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը բակալավրի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:	01.2018-12.2020	ՈՒՄՎ ՄԿՈԱԲ Ֆակուլտետներ ՈՒԳԸ	-	Բենչմարքինգի հաշվետվություններ: Ուսումնառության և հետազոտության ինտեգրման 4 պիլոտային ծրագրի իրականացում և արդյունքների վերլուծություն:
1.2.5.Իրականացնել դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) կիրառումը բոլոր դասընթացների համար՝ ավելացնելով դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման մեխանիզմները:	01.2018-12.2018	Տնօրեն ՈՒՄՎ Ֆակուլտետներ Ամբիոններ		Դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ) բոլոր դասընթացների համար
1.2.6.Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով:	01.2018-12.2020	ՈՒՄՎ Ֆակուլտետներ Ամբիոններ ՄԿՈԱԲ		Ակադեմիական ազնվության հաստատված կարգ

Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
1.3.1.Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովների հիման վրա ստեղծել կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար:	10-12.2018	ՈՒՄՎ ՄԿՈԱԲ ՈՒԽ Ֆակ. ՈՒԽ	-	Գործող ուսանողական հանձնաժողովներ բակալավրի որոշ կրթական ծրագրերի համար:
1.3.2.Վերանայել և գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը:	09.2019-12.2020	ՈՒՄՎ ՄԿՈԱԲ Ֆակուլտետներ	-	Մշտադիտարկման (մոնիթորինգի) համապատասխան զեկույցներ:
1.3.3.Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամբիոններում:	01.2018-06.2019	Տնօրեն ՈՒՄՎ ՄՌԿԲ Ֆակուլտետներ Ամբիոններ	-	Գիտխորհրդի կողմից հաստատված կարգ և գնահատման զեկույցներ:
1.3.4.Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը:	09.2018-12.2020	ՈՒՄՎ ՏՏՀՍ/ԶԲ Ամբիոններ	-	Գործող մասնաբաժին Դասընթացների և ծրագրերի գնահատման ԵՊՀ պորտալում:

1.3.5.Նախաձեռնել և իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթաց:	01-12.2020	Տնօրեն ՄԿՈԱԲ Ֆակուլտետներ Ստ/Բ	-	Ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց:

Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
1.4.1.Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար:	01.2019- 12.2020	ՏՏՀՍ/ԶԲ ՈՒՄՎ Ֆակուլտետներ Ամբիոններ		Գործող և սպասարկվող վեբ-ուսուցման համակարգ:
1.4.2.Զնավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար:	01.2019- 03.2019	ՏՏՀՍ/ԶԲ ՈՒՄՎ Ֆակուլտետներ Ամբիոններ	-	Ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ղեկավար ձեռնարկ: Համակարգից օգտվելու ուղեցույց:
1.4.3.Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար	04.2019- 12.2020	ՏՏՀՍ/ԶԲ ՈՒՄՎ Ֆակուլտետներ Ամբիոններ		50 վերապատրաստված դասախոս:
1.4.4.Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար:	01-06.2019	Տնօրեն ՄՈԿԲ Ֆակուլտետներ	-	Համապատասխան կանոնակարգերում խրախուսման վերաբերյալ ցուցանիշների առկայություն:
1.4.5.Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:	06.2019- 12.2020	ՈՒՄՎ ՏՏՀՍ/ԶԲ Ֆակուլտետներ Ամբիոններ	-	Առնվազն 50 դասընթաց՝ համալրված էլեկտրոնային ռեսուրսներով:
1.4.6.Ապահովել հեռակա ուսուցման դասընթացներն համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:	06.2019- 12.2020	ՈՒՄՎ ՏՏՀՍ/ԶԲ Ֆակուլտետներ ՀՈՒԲ Ամբիոններ	-	Էլեկտրոնային ռեսուրսներով ապահովված հեռակա ուսուցման դասընթացներ:

1.4.7.Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:	09.2018-12.2020	ՈՒՄՎ ՏՏՀՍ/ԶԲ Ֆակուլտետներ ՀՈՒԲ Ամբիոններ		Համապատասխան կանոնակարգ: Առցանց 3 նոր դասընթաց:

II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը

Խնդիր 2.1. Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանա- կացույց	Պատասխա- նատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
2.1.1.Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակում-ներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:	01.2018-12.2020	Տնօրեն Գիտ. քարտուղ. Ֆակուլտետներ Ամբիոններ	-	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշ-ների սանդղակ:
2.1.2.Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրա-պարակումները խրախուսելու համար:	01.2018-12.2020	Գիտ. քարտուղ. Ամբիոններ		Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակվող հոդվածների քանակի ավելացում:
2.1.3.Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը:	01.2018-12.2020	Ֆակուլտետներ Ամբիոններ ՈՒԳԸ		ՈՒԳԸ աշխատանքներում ներգրավված դասախոսների և ուսանողների թվի աճ
2.1.4.Բարելավել հետազոտական բաղադրիչի իրա-կանացումը բակալավրի կրթական ծրագրերում:	01.2018-12.2020	ՈՒՄՎ Ֆակուլտետներ		Բակալավրի կրթական ծրագրերում բարելավված հետազոտական բաղադրիչ

Խնդիր 2.2. Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
2.2.1.Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ տարածաշրջանային նշանակության համատեղ ծրագրերի իրականացմանը:	09.2018-12.2020	ՈՒՄՎ Ամբիոններ	-	Առնվազն մեկ համատեղ հետազոտական ծրագիր որևէ գիտահետազոտական կենտրոնի հետ: Ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում առաջատար գիտաշխատողների կայուն ներգրավվածությունը:
2.2.2.Նախաձեռնել համագործակցային ծրագրեր տարածաշրջանային բուհերի հետ և դրանցում ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին	01.2018-12.2020	Ֆակուլտետներ Ամբիոններ	Համապատասխան ֆինանսավ.	Համատեղ հետազոտական ծրագրերի թվի աճ:
2.2.3.Նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկությունների կարիքներին համապատասխան և նրանց մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրեր:	01.2018-12.2020	Ֆակուլտետներ Ամբիոններ	-	Ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի թվի աճ:

Խնդիր 2.3 Խթանել Մասնաճյուղի հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
2.3.1.Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում մասնաճյուղի աշխատողների հրապարակումները:	01.2018-12.2020	Տնօրեն Գիտ. քարտուղ. Ֆակուլտետներ Ամբիոններ	-	Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում մասնաճյուղի աշխատողների հրապարակումների թվի աճ:
2.3.2.Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող հոդվածների թիվը «Ակունք» ժողովածուում:	01.2018-12.2020	Ամբիոններ		«Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում օտար լեզուներով հոդվածների թվի աճ:
2.3.3.Կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատողների մասնակցությանը:	01.2018-12.2020	Ֆակուլտետներ Ամբիոններ		Միջազգային գիտաժողովներին մասնաճյուղի աշխատակիցների մասնակցության աճ

2.3.4.Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորաց-մանը:	01.2018-12.2020	Ֆակուլտետներ Ամբիոններ		Համատեղ հետազոտական աշխատանքների թվի ավելացում: Միջազգային դրամաշնորհային ծրագրերի և գիտական նախագծերում մասնաճյուղի աշխատակիցների թվի աճ

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, խթանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:

Խնդիր 3.1. Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանա-կացույց	Պատասխա-նատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
3.1.2.Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը:	01.2018-12.2020	Տնօրեն ՀՀԿ/ՄՊ		Արդյունավետ հանրային կապերի միասնական համակարգ
3.1.3.Ապահովել ինտերնետային կայքի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները:	01.2018-12.2020	Տնօրեն ՄԿՈԱԲ ՀՀԿ/ՄՊ	-	Համացանցային տարբեր հարթակներում ակտիվ հաղորդակցություն
3.1.4.Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը:	01.2018-12.2018	Տնօրեն ՀՀԿ/ՄՊ	-	Հաստատված մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և գովազդային նյութի ավելացում:
3.1.5. Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համա-կարգը:	01.2018-12.2020	Տնօրեն ՀՀԿ/ՄՊ	-	Հետադարձ կապի և մշտադիտարկման նոր գործիքներ:
3.1.6. Ընդլայնել և զարգացնել մասնաճյուղի ներգրավումը տարածաշրջանային ծրագրերին ու նախաձեռնու-թյուններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները:	01.2018-12.2019	Տնօրեն ՀՀԿ/ՄՊ ՄԿՊԿԲ		Սոցիալական նախաձեռնությունների և մատուցվող ծառայությունների ավելացում:
3.1.7. Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության	01.2018-	Տնօրեն		Ստորաբաժանումների միջև տեղեկատվության

արդյունավետությունը:	12.2020	ՀՀԿ/ՄՊ		տարածման և հաղորդակցման ակտիվացում
3.1.8. Խրախուսել հանրային ծառայությունների մատուց-մանը ուղղված գրահրատարակչական գործունեությունը:	01.2018-12.2020	Տնօրեն ՀՀԿ/ՄՊ		Հանրության գիտելիքի և արժեքների փոխանցմանը ուղղված հրատարակությունների աճ

Խնդիր 3.2. Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանա-կացույց	Պատասխա-նատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
3.2.1.Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը տարածաշրջանում և հետևել շուկայում իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերին:	09.2018 - 12.2020	ՄԿՊԿԲ	-	Ուսումնասիրությունների և մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվու-թյուններ:
3.2.2.Մշակել լրացուցիչ կրթության հայեցակարգ՝ ԵՊՀ-ում գործող ծրագրերը օգտագործելու և մասնաճյուղի համար մրցունակ ծրագրեր պատրաստելու ուղղությամբ:	01.2018 - 12.2020	ՄԿՊԿԲ Ֆակուլտետներ	-	Մշակված նոր ծրագրեր:
3.2.3.Մշակել տարածաշրջանի հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը:	01-04.2019	ՄԿՊԿԲ Ֆակուլտետներ ՀՀԿ/ՄՊ		Համագործակցության հուշագրեր կամ պայմանագրեր կազմակերպությունների հետ՝ լրացուցիչ ծառայությունների իրականացման վերաբերյալ
3.2.4.Բարձրացնել լրացուցիչ կրթության ծրագրերի վերա-բերյալ հանրային իրազեկվածության մակարդակը:	05-08.2019	ՄԿՊԿԲ ՀՀԿ/ՄՊ	-	Լրացուցիչ կրթության բաժին ինտերնետային կայքում:

IV. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԱԿՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

Խնդիր 4.1. Զարգացնել դասախոսական կազմի ներուժը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանա -կացույց	Պատասխա- նատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
4.1.1.Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը	01 - 06.2019	ՈՒՄՎ Ֆակուլտետներ ԵԴԱԿ	-	Գիտխորհրդի կողմից հաստատված ծրագիր:
4.1.2.Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիրը, համաձայն որի՝ -կատարելագործել դասախոների պաշտոնների տեղակալման չափորոշիչները և գործընթացները, -ապահովել հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին:	09 - 12.2019	ՈՒՄՎ Ֆակուլտետներ Ամբիոններ ՄՌԿԲ	-	Վերապատրաստված շուրջ 100 դասախոս:
4.1.3.Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:	09.2019 - 12.2019	Ֆակուլտետներ ԴԿՎՊ	-	Վերապատրաստման գործող դասընթացներ
4.1.4.Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների:	09.2019 - 09.2020	ՈՒՄՎ ՄՌԿԲ Ֆակուլտետներ Ամբիոններ	-	Կրթական ծրագրերի մասնագրերում համապատասխան պահանջներ:
4.1.5.Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:	09.2019 - 09.2020	ՈՒՄՎ ՄՌԿԲ Ֆակուլտետներ Ամբիոններ		Ուսանողների բավարարվածության աճ դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներից:
4.1.6.Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը:	09.2018- 12.2019	ՈՒՄՎ Ֆակուլտետներ Ամբիոններ		Գիտխորհրդի կողմից հաստատված նորմեր:

Խնդիր 4.2. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանա- կացույց	Պատասխա- նատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ

4.2.2.Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր:	01.2018-12.2018	Տնօրեն ՄՌԿԲ		Համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում և արհեստավարժ աշխատակազմ:
4.2.3.Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար:	09-12.2018	Տնօրեն ՄՌԿԲ Իրավախորհրդատու	-	Վարչական աշխատողների պաշտոնի գործող անձնագրեր:
4.2.4.Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար:	01-03.2019	Տնօրեն ՄՌԿԲ Իրավախորհրդատու Համապ. Ստ/Բ	-	Ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական համակազմի աշխատողների աշխատանքի գործող նկարագրեր:
4.2.5.Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ:	01.2018-12.2020	Տնօրեն ՄՌԿԲ Իրավախորհրդատու Համապ. Ստ/Բ		Վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստում և ատեստավորում:
4.2.6.Վարչական համակազմի ոչ բարձրագույն կրթություն ունեցող աշխատակիցների համար կազմակերպել որակավորման դասընթացներ և հետագայում անցկացնել ատեստավորում:	01.2018-12.2020	Տնօրեն ՄՌԿԲ Իրավախորհրդատու Համապ. Ստ/Բ		?

Խնդիր 4.3. Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
4.3.1.Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը:	09.2018-09.2020	Տնօրեն ՄՌԿԲ Ֆակուլտետներ Արհ. բյուրո Գլխ. հաշվապ.	Համապատ. ֆինանսավ.	Տարբերակված հավելավճարի չափանիշների ճշգրտում և հաշվեկշռի ավելացում:
4.3.2.Մշակել վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ:	01 - 12.2020	Տնօրեն ՄՌԿԲ Ֆակուլտետներ Արհ. բյուրո Գլխ. հաշվապ.	-	Գիտխորհրդի կողմից հաստատված կարգ:

4.3.3.Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության:	01.2018 - 12 .2020	Տնօրեն ՄՌԿԲ Ֆակուլտետներ Արհ. բյուրո Գլխ. հաշվապ.	Համապատ. ֆինանսավ.	Դասախոսական կազմի միջին աշխատավարձը՝ ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձի 125 %, իսկ վարչական և ուսումնաօժանդակ համակազմերինը՝ 75 %:
4.3.4.Ներդնել սոցիալական աջակցության ծրագրեր:	01.2018 - 12.2020	Տնօրեն ՄՌԿԲ Ֆակուլտետներ Արհ. բյուրո Գլխ. հաշվապ.	Համապատ. ֆինանսավ.	Սոցիալական ծրագրերի հաստատված ցանկ և բյուջեի համապատասխան հոդված:
4.3.5.Զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի կետերի պայմանները, ապահովել ԵՊՀ հանգստի և մարզաառողջարանային բազաների մատչելիությունը մասնաճյուղի բոլոր աշխատողների և սովորողների համար:	01.2018-12.2020	Տնօրեն ՄՌԿԲ Ֆակուլտետներ	Համապատ. ֆինանսավ.	Վերակառուցված և/կամ վերանորոգված ուսումնաարտադրական ու մարզաառողջարանային բազաներ՝ մատչելի և ճկուն գնային քաղաքականությամբ: ԵՊՀ հասարակական սննդի օբյեկտներում գործող մատչելի գներ և բարձրորակ սնունդ:
4.3.6.Ավելացնել սոցիալական ծրագրերի համար հատկացված հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում:	01.2018-12.2020	Տնօրեն Արհ. բյուրո Գլխ. հաշվապ.		Սոցիալական ծրագրերի բազմազանեցված տեսականի և սոցիալական ծախսերի ավելացում:

V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Հնավորել կրթական ծրագրերի իրականացման պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:

Խնդիր 5.1. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել մասնաճյուղի ենթակառուցվածքները:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ

5.1.1.Կրթական ծրագրերի պահանջներից ելնելով՝ տեխնոլոգիապես վերազինել առկա լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները, ձևավորել նորերը:	01.2018-12.2020	Տնօրեն ՈՒՄՎ Ֆակուլտետներ ՏՄ		Տեխնոլոգիապես վերազինված **50** լսարան և լաբորատորիա:
5.1.2.Արդիականացնել նիստերի դահլիճի, խորհրդակցությունների սենյակի տեխնիկական հագեցվածությունը:	01.2018-12.2020	Տնօրեն ՏՄ		Տեխնիկապես հագեցված նիստերի դահլիճ
5.1.3.Արդիականացնել մարզադահլիճը և մարզասրահը:	01.2018-12.2020	Տնօրեն, ՏՄ		Վերանորոգված մարզադահլիճ և մարզասրահ:
5.1.4.Իրականացնել մասնաճյուղի հյուրանոցային համալիրի վերանորոգման աշխատանքներ:	01.2018-12.2018	Տնօրեն ՏՄ		Վերանորոգված հյուրանոցային համալիր
5.1.5.Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ:	01.2018-12.2018	Տնօրեն ՏՄ		Վերանորոգված ուսումնական մասնաշենքեր:
5.1.6.Վերանորոգել և արդիականացնել գրադարանի ընթերցասրահներն ու գրապահոցը:	01.2018-12.2020	Տնօրեն ՏՄ		Վերանորոգված գրապահոց և 2 ընթերցասրահ:
5.1.7.Զարգացնել ուսումնական մասնաշենքերի անվտանգության ենթակառուցվածքը:	09.2018-12.2019	Տնօրեն ՏՄ Գրադ. վարիչ		Ներդրված անվտանգության ժամանակակից համակարգ
5.1.8.Արդիականացնել օպերատիվ տպագրական աշխատանքներ իրականացնող ենթակառուցվածքը:	01.2019-12.2019	Տնօրեն ՏՄ ՇԿԿ		Տեխնիկապես հագեցած օպերատիվ տպագրական կենտրոն

Խնդիր 5.2. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
5.2.1.Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ:	09-12.2018	ՄԿՈԱԲ ՏՏՀՍ/ԶԲ	-	Հաստատված հայեցակարգ:

5.2.2.Հիմնել «սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթ՝ վարչական, ուսումնական գործընթացներին (առարկայական ծրագրեր, հարցաշարեր, գրականություն և այլն) առնչվող տեղեկատվությամբ	01.2018-12.2018	ՌԻՄՎ ՇԿԿ ՏՏՀՍ/ԶԲ		«Սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթ
5.2.3.Զարգացնել ներքին համակարգչային լարային և անլար ցանցը՝ մեծացնելով օգտատերերի քանակը և կապուղիների թողունակությունը:	01.2018-12.2018	ՇԿԿ ՏՏՀՍ/ԶԲ		Ներքին համակարգչային ցանցի առնվազն 100 Mb/s թողունակություն:
5.2.4.Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ:	01.2016-12.2020	ՏՏՀՍ/ԶԲ		Արդիականացված գրադարանային ծառայություն: **Մշակված է**
5.2.5.Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը:	01.2016-12.2016	Գրադ. խորհուրդ		Գրադարանի ամբողջական էլեկտրոնային քարտարան: **Հիմնականում արված է**
5.2.6.Ընդլայնել ուսանողների հասանելիությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին:	01.2018-12.2020	Գրադ. վարիչ	-	Գրադարանի զարգացման հաստատված հայեցակարգ:
5.2.7.Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը:	01.2018-12.2020	Գրադ. խորհուրդ		Գրադարանի ամբողջական էլեկտրոնային քարտարան:
5.2.8.Բարձրացնել գրադարանային ծառայությունների որակը:	01.2018-12.2020	Գրադ. խորհուրդ		Գրադարանից օգտվողների բավարարվածության աճ առկա գրականությունից և մատուցվող ծառայություններից:

VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:

Խնդիր 6.1. Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
6.1.1.Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից:	09.2018-05.2019	ՌԻՄՎ ՄԿՈԱԲ Ֆակուլտետներ	ԵՊՀ-ի հետ համատեղ	Սոցիոլոգիական ուսումնասիրության զեկույց և առաջարկությունների փաթեթ:

		ՇԿԿ ՈՒԽ		
6.1.2.Զարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները:	01.2018-12.2020	ՈՒՄՎ ՄԿՈԱԲ Ֆակուլտետներ ՇԿԿ	-	Ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական բարելավված ծառայություններ:
6.1.3.Ներդնել առարկայական խորհրդատվությունների համակարգ բակալավրի ծրագրերի առաջին կուրսի ուսանողների համար, որոնք կիրականացնեն ավարտական կուրսերի ուսանողները:	01.2018-12.2018	ՈՒԽ ՈՒԳԸ	-	Խորհրդատվությունների գործող համակարգ:
6.1.4.Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները:	01.2018-12.2020	ՇԿԿ Ֆակուլտետներ ԱԻՄՍ ամբիոն ՈՒԽ, ՈՒԳԸ	ԵՊՀ-ի հետ համատեղ	Ուսանողական ակումբների արդյունավետ գործունեություն, բազմազանեցված մարզամշակութային ծրագրեր:
6.1.5.Մշակել ուսանողների կողմից վարչական անձնակազմին տարբեր խնդիրներով դիմելու ընթացակարգ:	01-04.2019	Իրավախորհրդ. ՈՒԽ		Ուսանողների կողմից վարչական անձնակազմին տարբեր խնդիրներով դիմելու գործող ընթացակարգ:
6.1.6.Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը»	01-12.2019	ՈՒՄՎ ՇԿԿ Իրավախորհրդ. Ֆակուլտետներ		Արդյունավետ լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ) համակարգ:
6.1.7.Նպաստել ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը:	01.2018-12.2020	ՈՒՄՎ ՇԿԿ Ֆակուլտետներ	-	Ձեռներեցության զարգացման կայացած կենտրոն:
6.1.8.Ընդլայնել հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունները:	09.2018-12.2019	ՇԿԿ	ԵՊՀ-ի հետ համատեղ	
6.1.9.Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:	01.2018-12.2020	Տնօրեն ՏՄ ՈՒԽ	-	Առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունների ավելացում: Խորհրդատվությունների գործող համակարգ:
6.1.10.Ապահովել շրջանավարտների հետ մասնաճյուղի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Մասնաճյուղին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները:	01.2018 - 12.2020	Տնօրեն ՈՒՄՎ ՄԿՈԱԲ ՇԿԿ Ֆակուլտետներ	-	Շրջանավարտների կողմից աջակցություն և նվիրատվություններ:

Խնդիր 6.2. Զարգացնել մասնաճյուղի ուսանողական կազմակերպությունների կարողություններն ու խթանել ուսանողական ինքնակառավարումը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
6.2.1.Մշակել ուսանողական ինքնակառավարման հայեցակարգ:	09.2018-12.2018	Ֆակուլտետներ ՈՒԽ, ՈՒԳԸ	-	Ուսանողական ինքնակառավարման հայեցակարգ:
6.2.2.Կազմակերպել ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդությանն աջակցող ուսուցողական դասընթացներ:	01.2018-12.2020	Ֆակուլտետներ ՈՒԽ ՈՒԳԸ	ԵՊՀ-ի հետ համատեղ	Ուսանողների համար առաջնորդության ուսուցողական դասընթացների համակարգ:
6.2.3.Խթանել մասնաճյուղի ուսանողական կազմակերպությունների ներհանրապետական և միջազգային համագործակցությունը:	01.2018-12.2020	Ֆակուլտետներ ՈՒԽ ՈՒԳԸ		ՈՒԽ և ՈՒԳԸ համագործակցությամբ իրականացվող ծրագրերի թվի աճ:
6.2.4.Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈՒԳԸ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:	01.2018-12.2020	Ֆակուլտետներ ՈՒԽ ՈՒԳԸ		ՈՒԳԸ ծրագրերում ներգրավված ուսանողների թվի աճ:

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել մասնաճյուղի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին: Ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը:

Խնդիր 7.1. Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ

7.1.1.Քայլեր ձեռնարկել բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար:	01.2018 – 12.2020	Տնօրեն		ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով դիմորդների թվի աճը
7.1.2.Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար մասնաճյուղի կայքէջը:	01.2018-12.2020	ՈՒՄՎ/ՄԿՊԿԲ ՀՀԿ/ՄՊ Ֆակուլտետներ	-	Մշտապես թարմացվող տեղեկատվական համակարգ բակալավրիատի դիմորդների համար:
7.1.3.ԵՊՀ-ի հետ համատեղ Տավուշի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել մասնաճյուղում՝ 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը:	01.2018-12.2020	ՄԿՊԿԲ Ֆակուլտետներ		Երկու փուլով իրականացվող ամենամյա օլիմպիադաներ՝ շուրջ 200 մասնակիցներով
7.1.4.Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր մասնաճյուղ:	01.2018-12.2020	ՄԿՊԿԲ Ֆակուլտետներ		Տարեկան շուրջ 200 սովորողի ճանաչողական այց ԵՊՀ ԻՄ
7.1.5.Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները տարածաշրջանում՝ հիմնելով դիմորդների հետ տարվող աշխատանքների ներկայացուցչություններ և դրանք ապահովելով անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:	01.2018-12.2020	ՄԿՊԿԲ Ֆակուլտետներ		Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ մարզերում:
7.1.6.Ընդլայնել ԵՊՀ ԻՄ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների և քոլեջների շրջանակը:	01.2018-12.2020	ՈՒՄՎ/ՄԿՊԿԲ Ֆակուլտետներ	-	ԵՊՀ ԻՄ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցներում համալսարանական դասախոսների կողմից շուրջ 100 դասախոսություններ
7.1.7.ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում:	01.2018-12.2020	ՈՒՄՎ/ՄԿՊԿԲ Ֆակուլտետներ		Հանրակրթական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ (շուրջ 100 ակնարկային և բովանդակային դասախոսու-թյուն, քննարկում, հանդիպում)

Խնդիր 7.2. Օպտիմալացնել մասնաճյուղի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին, կատարելագործել ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
7.2.1.Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը:	01.2018-12.2020	ՈՒՄՎ Ֆակուլտետներ	-	Ընդունելության ամենամյա պլանավորում՝ ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի:
7.2.2.Կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորման համար աշխատանքներ իրականացնել համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի կատարելագործման ուղղությամբ:	01.2018-12.2020	ՈՒՄՎ/ՄԿՊԿԲ ՄԿԲ	-	Կրթական ծրագրերով ընդունելության կատարելագործված ընթացակարգեր և աշխատակարգեր

Խնդիր 7.3. Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը մասնաճյուղի կրթական բոլոր աստիճաններում՝ իրականացնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
7.3.1.Ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ անհրաժեշտության դեպքում ստեղծելով ԵՊՀ ԻՄ ներկայացուցչություններ:	01.2018-12.2020	ՄԿԲ		Օտարերկրյա դիմորդների թվի աճ:
7.3.2.Քայլեր ձեռնարկել ուսանողների հավաքագրմամբ զբաղվող օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ համագործակցության թույլտվություն ստանալու համար:	01.2018-12.2020	Տնօրեն ՄԿԲ	-	Օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ 3-4 պայմանագրի կնքում:
7.3.3.Մշակել և մասնաճյուղի կայքում ներկայացնել օտարերկրյա ուսանողների ուսումնառության ուղեցույց, ինչպես նաև մասնաճյուղի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր:	01.2018 - 12.2020	ՈՒՄՎ/ՄԿՊԿԲ ՄԿԲ ՀՀԿ/ՄՊ		Օտարերկրյա դիմորդներին հասանելի մշտապես թարմացվող տեղեկատվություն:
7.3.4.Ստեղծել և կիրառել նախապատրաստական կրթական ծրագրեր՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ԵՊՀ ԻՄ	01.2018-12.2020	ՈՒՄՎ ՄԿԲ	-	Մշակված նախապատրաստական ծրագրեր

ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու համար:				
7.3.5.Մասնակցել ամենամյա կրթական էքսպոներին և նմանատիպ միջոցառումներին	01.2018-12.2020	ՈՒՄՎ ՄԿԲ		Համապատասխան տեղեկատվություն և նյութեր

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ապահովել մասնաճյուղի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել մասնաճյուղի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Խնդիր 8.1. Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
8.1.1.Ձեռնարկել քայլեր ընդլայնելու մասնաճյուղի մասնակցությունը ԵՊՀ գիտակրթական ծրագրերին՝ նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը:	01.2018 – 12. 2020	Տնօրեն ԳԽ Գիտ. քարտուղ. Ամբ.վարիչներ	–	Պետական ֆինանսավորման ավելացում:
8.1.2.Ակտիվացնել մասնաճյուղի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին:	01.2018 – 12. 2020	ԳԽ Գիտ. քարտուղ. ՈՒՄՎ պետ ՄԿԲ Ամբ. վարիչներ	–	Պետական և միջազգային դրամաշնորհներից ակնկալվող դրամական հոսքերի աճ:
8.1.3.Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ ԻՄ-ի վճարովի ծառայությունները:	01.2018 – 12. 2020	Տնօրեն ԳԽ Իրավախորհրդ. Ֆակուլտետներ Հաշվապահություն	–	Վճարովի ծառայություններից ֆինանսական հոսքերի աճ:

8.1.4.Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ մասնաճյուղի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից մասնաճյուղին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները:	01.2018 – 12. 2020	Տնօրեն ՇԿԿ Ֆակուլտետներ Հաշվապահություն ՈՒԽ, ՈՒԳԸ	–	Շրջանավարտներից և այլ շահառուներից ստացվող ֆինանսական հոսքերի աճ
8.1.5.Ուսումնասիրել մասնաճյուղի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր:	01.2018 – 12. 2020	Տնօրեն Հաշվապահություն Ֆակուլտետներ		Բազմազանեցված ֆինանսական մուտքեր:

Խնդիր 8.2. Զարգացնել մասնաճյուղի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
8.2.1.Ներդնել ռիսկերի կառավարման համակարգ՝ շուկայական և տնտեսական տարաբնույթ ռիսկերի նկատմամբ մասնաճյուղի ռեսուրսների կայունության ապահովման նպատակով:	09.2018 – 12. 2018	Տնօրեն	–	Ռիսկերի կառավարման համակարգ:
8.2.2.Ներդնել ֆինանսական ոլորտի հաշվառման տեղեկատվական ցանցային համակարգը՝ ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպերատիվության ու արդյունավետության ապահովման նպատակով:	01.2018 – 12. 2020	Տնօրեն ՏՏՀՍ/ԶԲ Հաշվապահություն		Ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման ծրագրային ապահովում:
8.2.3.Օպտիմալացնել և վերապատրաստել ֆինանսական կառավարմանն առնչվող ստորաբաժանումների կազմը:	01.2018 – 12. 2020	Տնօրեն Գլխ. հաշվապահ		Համապատասխան ստորաբաժանումների վերապատրաստված աշխատողներ:
8.2.4.Մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր:	01.2018 – 12. 2020	Տնօրեն ՏՄ		Ներդրված միջոցառումների ծրագիր:

Խնդիր 8.3. Կատարելագործել մասնաճյուղի իրավական դաշտը և կառավարման համակարգը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ

8.3.1.Օպտիմալացնել մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը, բարձրացնել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը:	01.2018 – 12. 2020	ԳԽ Տնօրեն Ստ/Բ ղեկավ.	–	Կազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի օպտիմալացում, հաշվետվությունների սահմանված ձևանմուշներ:
8.3.2.Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել մասնաճյուղի նոր կանոնադրությանը:	01.2018 – 12.2018	ԳԽ Տնօրեն ՄԿՈԱԲ Իրավախորհրդ.	–	Լրամշակված և նորացված ներքին իրավական ակտեր:
8.3.3.Զարգացնել մասնաճյուղի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և տեղեկատվական համակարգերը:	01.2019 – 12. 2020	Տնօրեն ՏՏ գծով տնօրենի խորհրդական ՏՏՀՍ/ԶԲ ՄՌԿԲ		Տեղեկատվական գործուն համակարգեր Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն
8.3.4.Կատարելագործել ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի համակարգը:	01.2018 – 12. 2020	Տնօրեն ՄԿՈԱԲ Ֆակուլտետներ	Համապատ. ֆինանսավ.	Ներքին աուդիտի գործող համակարգ:
8.3.5.Գործարկել տեղական և արտերկրյա բուհերի հետ ինստիտուցիոնալ համեմատական գնահատման (բենչմարքինգի) համակարգը:	01.2019 – 12. 2019	Տնօրեն Տնօրենի խորհրդ. ՄԿՈԱԲ Ստ/Բ		Համապատասխան զեկույց:
8.3.6.Բարձրացնել սովորողների ներգրավվածության արդյունավետությունը մասնաճյուղի կառավարման գործընթացներում:	01.2018 – 12. 2020	Տնօրեն Տնօրենի խորհրդ. ՄԿՈԱԲ ՈԻԽ, ՈԻԳԸ Ֆակուլտետներ		Կառավարման մարմիններում ընդգրկված վերապատրաստված սովորողներ

Խնդիր 8.4. Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
8.4.1.Մշակել էթիկայի սկզբունքներ և բարեվարքության կանոններ մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների համար:	09.2018 – 12. 2018	Էթիկայի հանձն. ՄԿՈԱԲ	–	Էթիկայի սկզբունքների և բարեվարքության կանոնների առկայությունը

		ՀԿՀՀ		
8.4.2.Մշակել և իրականացնել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների նոր ծրագիր:	01.2018 – 12. 2020	ՀԿՀՀ	–	Հակակոռուպցիոն միջոցառումների հաստատված ծրագիր
8.4.3.Բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը:	01.2018 – 12. 2020	Տնօրեն ՈՒՄՎ պետ Ֆակուլտետներ Ուսումն.խորհ. ՀՀԿ/ՄՊ ՈՒԽ	–	Գործընթացի թափանցիկությունը ապահովող լրամշակված կանոնակարգեր, իրազեկված ուսանողներ
8.4.4.Բարձրացնել աշխատողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը մասնաճյուղի կառավարման համակարգում:	10.2018-05.2019	Տնօրեն ՄՌԿԲ ՄԿՈԱԲ Արհ. բյուրո ՀՀԿ/ՄՊ Ստ/Բ ղեկավ. ՈՒԽ	-	Տեղեկատվական համակարգերում առկա ներքին նորմատիվային ակտեր, իրազեկված աշխատողներ
8.4.5.Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարողականը պարբերաբար քննարկել մասնաճյուղի գիտական խորհրդում:	12.2018-12.2020	ՀԿՀՀ նախագահ		Գործողությունների վերաբերյալ հաշվետվություններ և որոշումներ
8.4.6.Մասնաճյուղի կայքէջի զարգացում՝ ապահովե-լու ընթացակարգերի, գործընթացների թափանցիկու-թյունը և հասանելությունը հասարակությանը:	12.2018-12.2020	ՄԿՈԱԲ ՀՀԿ/ՄՊ		Եռալեզու կայքէջի առկայություն

IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

Խնդիր 9.1. Մշակել և իրականացնել մասնաճյուղի միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ

9.1.1.Մշակել ԵՊՀ ԻՄ-ի միջազգայնացման քաղաքականություն և գործունեության ծրագիր	09.2018 – 03.2019	ՄԿԲ ՌԻՄՎ	-	Միջազգային գործունեության ռազմավարական ծրագրի առկայություն
9.1.2.Քայլեր ձեռնարկել ԵՊՀ-ի մասնակցությամբ միջազգային ծրագրերում մասնաճյուղի ներգրավման համար:	01.2018 – 12.2020	ՄԿԲ		Մասնակցություն առնվազն 2 ծրագրերում
9.1.3.Մասնաճյուղի կայքէջը դարձնել եռալեզու և միջազգայնացման գործընթացներին նպաստող:		ՄԿԲ ՄԿՈԱԲ		Եռալեզու կայք-էջի առկայություն
9.1.4.Իրականացնել միջազգայնացմանն ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում:	01.2018 – 12.2020	ՄԿԲ		Վերապատրաստված 50 աշխատող
9.1.5.Իրականացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոսների, աշխատակիցների և ուսանողների օտար լեզվի իմացություն մակարդակի բարձրացման ծրագիր:	01.2018 – 12.2020	ՄԿԲ ՌԻՄՎ		Վերապատրաստված աշխատողներ և ուսանողներ
9.1.6.Օգտագործել ԵՊՀ հնարավորությունները մասնաճյուղի վերաբերյալ Հայաստանում և այլ երկրներում տեղեկատվական նյութերի ստեղծման և տարածման առումով:	01. 2018- 12. 2020	ՄԿԲ ՀՀԿ/ՄՊ		Մի քանի լեզուներով տեղեկատվական փաթեթի առկայություն

Խնդիր 9.2. Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ	Ակնկալվող արդյունքներ
9.2.1.Ներդնել թիրախային օտարալեզու ուսումնական մոդուլներ և ծրագրեր	09.2018 – 06. 2020	ՌԻՄՎ Ֆակուլտետներ		Գործող ծրագրերում ներդրված կամընտրական 4 օտարալեզու մոդուլ
9.2.2.Հիմնել ամառային կրթական, մշակութային կամ ճանաչողական ծրագրեր	09.2018 – 06. 2020	ՄԿԲ ՌԻԽ, ՌԻԳԸ		Ամառային դպրոցի ծրագիր և առաջարկ
9.2.3.Օգտագործել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ԵՊՀ կապերը՝ համատեղ ծրագրեր իրականացնելու համար:	01. 2018 – 12.2020	ՌԻՄՎ Ֆակուլտետներ ՄԿԲ		Առնվազն 2 ծրագրի մասնակցություն
9.2.4.Աշխատողների և սովորողների շրջանում բարձրացնել ակադեմիական շարժունության ծրագրերի մասին իրազեկվածությունը:	01. 2018- 12. 2020	ՄԿԲ		Ակադեմիական շարժունության ծրագրերի մեջ ներգրավված ուսանողների և դասախոսների թվի ավելացում
9.2.5.Կրթական ծրագրերի վերակառուցում՝	09. 2018 –	ՌԻՄՎ		Բենչմարքինգի հիման վրա վերակառուցված

շարժունությունն ապահովելու նպատակով:	06. 2020	Ֆակուլտետներ ՄԿԲ		կրթական ծրագրեր:

Ստ/Բ - Ստորաբաժանումներ
ՏՏՀՍ/Զ - Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին
ՈՒՄՎ - Ուսումնամեթոդական վարչություն
ՀՀԿ/ՄՊ - Հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատու
ՎՏՎ - Վարչատնտեսական վարչություն
ՈՒԳԸ - Ուսանողական գիտական ընկերություն
ՄԿԲ - Միջազգային կապերի բաժին
ՄԿՈԱԲ – Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին
ԱԻՄՍ ամբիոն – Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոն
ՏՄ - Տնտեսական մաս
ԵԴԱԿ - «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոն»
ՀԿՀՀ - Հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողով
ԴԿՎՊ - Դասախոսական անձնակազմի վերապատրաստման գործընթացի պատասխանատու